

Վիրկը սիրուն մի երեխայ՝  
Մ'օր սիրո վլրան կը գողդողայ.  
Աշքեր հապայու, չէկ չէկ մազեր,  
Երնորհալ փայլին թռչեր:  
Ո՛հ, չէ, այսաէս տեսօք տղայ  
Բողոք աղիարհէ փընտռեն շվայ:

Ալ, տե՛ս, յանկարծ նենգժոտ օրհաս  
Պաղ ձեռք ձրգեց գէպ ՚ի տրդուն.  
Ո՛չ ցաւ անշուր, նոր-մայրն, նոր-հարս  
Կը պաղատէր անդութ մահուն.  
« Ա՛հ, խընայէ որդուսա սիրուն,  
Թուրգմ. Հ. Ք. Վ. Քունչերնան

« Թա՞ղ որ գըրկացըս մէջ խացտայ,  
« Թո՞ղ որ ժըպտին աշերն նախտուն »:  
— Այլ շըլլեց Օրհասն նորա:

Մինակ՝ ՚ի տան երեկոյին,  
Յորում սըրոի ցաւք բորբոքին,  
Սըգատեսիլ ընդ ուռենեաւ  
Անբաղդ մարիկն լազու եկաւ:  
Հոն խառնելով իւր կըսկիծներ  
Սըգաւոր մօր հեկեկանաց,  
Խայտի՛ ուռին վերև թառած,  
« Ա՛հ, տուր, կ'ասէր, տուր իմ ձագեր »:

ԾՈՓԷՆ

## ՄԱՆՐԱՎԵՐ

### Խ Ա. Զ Ս Ր Բ Ո Յ Ե Ն Յ Ո Վ Հ Ա. Ն Ն Ո Ւ

Ա.

 անտ քաղաքին մօտերը՝ չորս  
հինգ հարիւր բարձրակառոյց  
տներէ բաղկացեալ աւան մի կայ՝  
որոյ բնակիչք վաճառական և շատ  
հարուստ են. այս պատճառաւ այս  
գիւղաքաղաքիս մէջ մէկ իսեղճ տուն  
չես գտներ: Այս ճոխ աներէն միշտն  
տէրն կը կոչուէր թաղտասար Մէրքս,  
որ կանտեցի հարուստ վաճառական  
մ'էր, և 1535ին իր յիսներորդ տարին  
լրացուցեր էր:

Թաղտասար բարձր էր հասակով, և  
տոկուն կազմուածով լայն ուսեր, հօգոր  
անդամներ, և կուրծքին թաւ մազերն՝  
կ'արտայայտէին թէ մարմարն և թէ  
ոգւոյն կորովութիւնն. մազերն շագա-  
նակագոյն էին. գէմքն՝ լայն և լցուն,  
որոյ այտից վերայ՝ կը նշմարուէր ծաղ-  
կի հրւանդութեան պատճառած թեթև  
սպիներն. կապուտակ, փոքր և գո-  
գաւոր աշքերն՝ թաւամազ արտեսանաց  
տակ կը փայլէին: Յարատեսութիւն և  
մտաց արթնութիւն՝ կը փայլէին իր դի-

մաց վրայ. և այս չքնազագիւտ յատ-  
կութեամբք շատ գանձ դիզեր էր:  
կաշիի վաճառական էր. այս գործիս  
ձեռք զարկեր էր ամենաաշխին դրամա-  
զիսով՝ որ հօրը ժառանգաւթիւնն էր:  
իսկ իւր հայրը յԱնվերաշուան հիւսող  
էր: Բաղտասար քսան և ութ տարեկան  
Նորմանտիխա ճանապարհորդած ժամա-  
նակ՝ հարուստ երկրատիրոջ մը միակ  
աղջկան՝ կտտարինէի՛ հետ ամուսնացեր  
էր: Կտտարինէ մանչ զաւակ մը ծնաւ,  
և բոլոր իր գութը կեղդոնացուց այս  
մանկան վերայ: Տարի մը ետքը՝ վախ-  
ճանեցաւ կատարինէ փոխադրական  
հիւսանդութեամբ. Պաղտասար ալ՝ որ-  
պէս զի իր հայրը չտհաճեցնէ: Հրա-  
ժարեցաւ յերկրորդ ամուսնութենէ:

Միմէոն Մէրքս պատանին 1535ին քը-  
սան տարեկան էր: Ամենաճիշդ մօրը  
կը նմանէր. Կարմրայտն և զուարթ-  
երես, կայտառ և գիրուկ էր: Թէպէտե  
սաստիկ խաղասէր, հաճոյասէր և ցը-  
րուած էր, բայց հայրն՝ որ զրեթէ կը  
պաշտէր զինքը՝ այս պակասութիւնե-  
րըս կատարելութիւն կը համարէր. և  
իր որդուոյն փափազը կատարելու հա-  
մար՝ ժախչի չէր խնայեր:

Բաղտասար շատ հարուստ էր : Ասկայն իր տան ընտանիքն կը բաղկանար իրենցմէ զատ՝ երեք այլ ևս անձերէ : Այս անձերէն առաջինն էր՝ բարեպաշտ Մարգարիտան, որ հուանտացի էր, և աղախին Սիմեոնի . Մարգարիտայի արտաքին աեսքն՝ ներքնոյն բնաւ չէր համեմատեր : Գէր և կարճ էր հասակաւ . ոտքերն տձեւ, ձեռքերուն մորթն բըրտացած, մատերն վարակուո, դէմքն այլանդակ, և այտից վրայ կը նշմարուէր չորս կամ հինգ հատ կաղնի մեծութեամբ կոծիծներ : Բայց այս բիրտ և կոշտ պատենին աակ կը թնդար գորսով և ազնիւ զգացմամբ լի սիրտ մը : Մարգարիտա քառասուն տարեկան էր: Բաղտասարի կինը վախճանելէն անմիջապէս վերջը՝ ծառայութեան մոտեր էր, և ինքն մեծցուցեր էր զլիմէոն : Տղայք՝ մինչ գեռ փոքր են՝ կը սիրեն իրենց խընամակալներն՝ առանց արտաքին դիմաց վայելութիւն փնտուելու . Մարգարիտա ալ շատ կը սիրէր՝ իր մանուկ տերը, բոլոր արտին գորովն՝ կեգրոնացուցեր էր Սիմեոն մանկան վրայ . մօր պէս կը խնամէր զինքը, այնպէս որ խեղճ պատանին չզգաց բնաւ իր մօրը կորուստը : Վաճառականն ալ փոխան Մարգարիտայի այս խնամոց՝ խոստացեր էր որչէան է զինքն՝ ի ծառայութենէ և չթողու որ անկելանոցի մէջ մեռնի :

Բաղտասարի ընտանիքը կազմող երկրորդ անձն՝ ծերուկն խնամէնդուրա, յիսունընհինգ տարեկան, գրագիր էր, և շատ տարիներէ՝ ի վեր ինքն էր կարգադիր թղթակցութեանց վաճառականին : Բոնաւէնդուրա՝ կ'ատէր ըզ-Մարգարիտա, վասն զի տան մանր մունըր ծախուց և շահերուն մեծ հոդ ունէր, և վառելիքի և գարեջրոյ խնայող էր : Ամուսնացեր էր, և կը մասածէր՝ որ թէ աղախինը կարենամտընէն վարնտել տեղը կինս կը զնեմ: Բայց Մարգարիտա էր զօրաւոր նեցուկ թէ բաղտասարի և թէ մանաւանդ Սիմեոնի, — լնաւաց երրորդ անձն էր՝ երիտասարդ մօրագեռորդի մը, որ երկու տարի ա-

ուաշ Նորմանտիայէն եկեր էր . այս պատանիս կը կոչուէր թէոդոր Մօվիլ . քսաննեութ տարեկան աշխոյժ երիտասարդ մ'էր : Երեք տարի բարիկ կեցեր էր հոն իր բոլոր ունեցածը վատնելով և յետոյ որոշեր էր՝ որ բաղտասարի քով բնակի իբր երկրորդ գրագիր, վաճառականը նկատելով որ թէոդոր իր ամենասիրելի կնկան մերձաւոր ազգական է և մօրագեռորդի Սիմեոնի շատ հոգ կը ցուցընէր վրան : Երիտասարդն յիրաւի ունէր ձիրքեր՝ որոնցմով առինքն կը յանկուցանէր այլոց գորովն : Սակայն պատանեկութեան առջի տարիներուն մէջ բարիդու պապականեալն մահարիթ օդը չնչեր էր . ճարտար շարժ մունքներ ունէր, պարզ՝ բայց վնասակար խաղեր շատ գիտէր, և մէկ խօսքով բարիկցիցի երիտասարդ մ'էր : Սակայն պէտք եղած տեղը՝ դատողութեան և բարյականի վրայ ալ շատ լւա կը ճառէր : Բարեմիտ վաճառականը այսչափ յատկութիւնը տեսնելով երիտասարդին վրայ՝ միտքը գրաւ որ իր որդուցն գերազանց Ս'ենաոր մի գտաւ . և յիրաւի, պատանին յանձնեց թէոդորի ամսական թոշակը կրկնապատելով :

Սակայն թէոդորի գունաթափ դէմքըն և վառվառւն աշերն՝ նշան էին սաստիկ և բուռն կրից : Բայց բաղտասար միայն կաշիի տեսակներէն կը հասկընար, Արդ երկու տարիէ ի վեր վաճառականը իր որդին յաձներ էր թէոդորի որ յաճախ կ'ուսուցանէր պատանույն կատարելու ամէն տեսակ հաճոյք : Սիմեոնի ինչպէս կը գուշակուի՛ շատ կը սիրէր իր կամակատար ուսուցին . բաղտասար ալ տեսնելով այս երկուքին սէրն և յարում՝ մեծապէս գոն կը լինէր իր երկրորդ գրագրին վրայ : Բոնաւէնդուրա՝ չէր համարձակեր ատել զթէոդոր, թէպէտ և կը տեսնէր՝ որ իր ապագայ տիրոջ աջ բազուկն էր : Բայց որպէս զի իր գործն յաշնող երթայ՝ երկու երիտասարդաց ընթացքն ալ կը գովեր : Երբեմն խարդախ ձայնով կը հարցնէր տիրոջ թէ արդեօք Սիմեոն որդին ալ պիտի մանէ վաճառականա-

կան գործոց մէջ : Բայց բաղտասար իս-  
կոյն կ'ընդհատէր խօսքն ըսելով .

— Երբ որ ուզէ տղաս , թողունք որ  
վայելէ դեռ երիտասարդութիւնը :

Սակայն բոնավէնդուրա իր գործն  
զիտցող անձ մի էր , և ըղեղն հաշուե-  
տետրին էջերուն վրայ մաշեցուցեր էր .  
մէկ խօսքով շատ շահասէր էր . բայց  
միանդամայն խղճմտանք ունէր և տի-  
րոջ շահերուն ալ վրէժինդիր էր , վա-  
սըն զի լաւ գիտէր՝ որ իր գործն այն-  
չափ յաջող կ'երթայ՝ որչափ որ ինքն  
անկեղծ լինի իր հաշիւներուն մէջ :

Մարդարիտա ալ կը սիրէր զթէողոր ,  
վասն զի կը տեսնէր որ անհրաժեշտ  
կարևոր է Սիմէնի : Դարձեալ , նորման-  
տացի մենտորը՝ շատ վեհանձն էր , և  
մերթ ընդ մերթ՝ ազնիւ աղախնոյն՝ բա-  
րի ձեռք կու տար : Թէպէտ և խեղճ կի-  
նը անշահասէր և ուղղախոն էր , բայց  
չէր ալ անարդեր օրինաւորապէս ըն-  
դունած փոքր ընծաներն , և իր ստացածը  
բարի նպատակի կը ծառայեցնէր . ո-  
րովիշետե բոլոր ձեռքն անցած ստակը  
կը հաւաքէր 'ի մի և ջօդդէկէմ բնակող  
պառաւ և տկար մօրը օգնութիւն կը  
դրէք : Եթե այսքան առաքինութեանց  
և բարեկատութեանց՝ պատմութեան ըն-  
թացքին մէջ պիտի տեսնենք՝ որ կու  
գան դէպէտեր՝ յորս առկախեալ կը մնայ  
իր առաքինութիւնը :

Թէոգոր մեծ ազդեցութիւն ստացեր  
էր Սիմէնի վրայ՝ ջատագովելով պա-  
տանոյն հակամիտութիւնքն և ախորժն .  
և անզգալապէս տիրապետեր էր խեղ-  
ճին վրայ : Կատարեալ սրտակցութիւն  
մի արմատացեր էր այս երկու սրտերուն  
մէջ՝ որք քիչ ատենէն սկսան յաճախել  
վնասակար և մահառիթ ընկերու-  
թեանց ժողովատեղիներն :

Բաղտասար անլուր առատածեռնու-  
թեամբ իր որդւոյն հաճոյից ամէն ծախ-  
քը լիովին կը հոգար : Բայց իսկոյն իր  
որդւոյն հաճոյից համար որոշած դրա-  
մագլուխն որ զրեթէ բարեկեաց տասն  
երիտասարդաց կը բաւէր , շատ քիչ  
երկեցաւ : Սիմէն շատ անդամ ստակ  
փոխ առաւ և պարտատէր եղաւ :

Այս երիտասարդ անձն՝ ոչ իսկոյն՝  
այլ կամաց կամաց ինքզինքը կը կոր-  
սրնցընէր : Վերջապէս աչք մի տուաւ իր  
ներկայ վիճակին վրայ : Գիտելով իր  
հօրը խստութիւնը՝ և վախելով որ յան-  
կարծ հայրը չիմանայ իր մտատան-  
ջութիւնը , գրեթէ ամիս մը ինքզինքը  
զսպեց , ծախքերուն չափ դրաւ և սկսաւ  
իր պարտքը վճարել : Բայց թժբաղդա-  
րար իրիկուն մը , երբ կը գտնուէր Սի-  
մէն անկարդ երիտասարդաց խմբի մը  
մէջ , չկրցաւ ընդդիմանալ թէոդորի  
հրապուրանաց և փաղաքանաց՝ և իս-  
կոյն խաղի թղթերն ձեռք առաւ . եր-  
կու երիտասարդ բարեկամը խաղացին ,  
և երեկոյեան դէմ գրապաննին դատարկ  
տուն դարձան :

Սիմէնն ահաւոր գիշեր մը անցուց :  
Վախելով որ առան չգտնուած տտեն  
յանկարծ չգան պարտատէրներն , և  
հօրմէն պահանջնեն՝ նոյն օրն և յաջորդն՝  
տնէն դուրս չելաւ , և թէոդորի հետ  
դրասենեակը մտնելով սկսան աշխա-  
տիլ . բաղտասար այս յանկարծակի  
փոփոխութիւնն տեսնելով՝ շատ զար-  
մացաւ :

Ժամը տասնումէկ ու կէսին , ճաշէն  
քիչ առաջ , Մարդարիտա կուց զբաղ-  
տասար ըսելով թէ հին բարեկամներէդ  
մին այցելութեան եկեր է : Սոյն ատեն  
Բոնավէնդուրա շրջագայելու ելեր էր :  
Տասը վայրկեան ետքը , երկու երիտա-  
սարդներն գոցեցին դրասենեկին դուռն ,  
բանալին աղախնոյն յանձննեցին և տր-  
նէն դուրս ելան ըսելով թէ երեկոյեան  
դէմ տուն կը դառնանք : Բաղտասար  
իր բարեկամը ճաշի բռնեց . և տան մէջ  
սովորականէն դուրս բան մը չէր նշմա-  
րուեր :

Զորս ամիս անցաւ : Հաւանական է  
որ այս ամիսներուն մէջ Սիմէնն Մէրքս  
վճարեց իր պարտքն . վասն զի հայրը  
ընաւ չիմացաւ : Խեղճ հայրն և ոչ փոքր  
կասկած մի անգամ ունեցաւ իր որ-  
դւոյն անկարդութեանց վրայ . բայց քիչ  
մը ատենէ 'ի վկր անհանդիսաւ էր իր  
սիրան՝ տարբեր պատճառներու համար .  
այլ փետրուարի 24ին բոնավէնդուրայի

հետ գրասենեկին մէջ փակուելով՝ բացաւ սիրուը իր գրագրին:

— Ծերուկ, չես զիտեր ինծի հանդիպածն, ըսաւ, պէտք է որ պատճեմ քեղի, վասն զի դուն չես գողը:

— Գո՞լ . . . պարոն, պատասխանեց բոնավէնդուրա, ոտքի վրայ ցատքելով, դո՞ւ մը կայ . . .

— Ըսի որ գուն չես, ծերուկ, ուրեմն մի աղաղակեր: Եւ ինչպէս կարելի է որ գուն գողութիւն ընես:

— Գողութիւն, տէր իմ: ուրեմն ինչ գողցեր են:

— Հիմա կ'ըսեմ: Կը տեսնես այս մեծ և ճարտարագործ բանալիս: Կը ճանչնամ զայն, այնպէս չէ:

— Կը ճանչնամ: այն, այսինքն՝ տեսեր եմ զայն, բայց բնաւ չեմ դպած:

— Աստուած իմ, զիտեմ որ գուն չես, բոնավէնդուրա: Արդշատլաւ, այս՝ արկեղս բանալին է: Միշտ քովս կը պահեմ զայն, ցորեկը գոտույս վրայ կը կապեմ, և զիշերը բարձիս տակ կը զնեմ, և սակայն այսու հանդերձ, արկդս բացուեր է:

— Ո՞հ, տէր իմ, արկդդ:

— Այսու արկդս, ըսաւ բաղտասար: Երկու անգամ, թերես երեք և չորս անգամ ալ գողցեր են: բայց գէլթ երկու անգամն ստոյդ զիտեմ:

— Արդեզք մեծ է կորուստը, հարցուց բոնավէնդուրա՝ մեռելի գոյն առած:

— Երկու անգամ հազարական ֆիօրին գողցեր են:

— Ո՞հ, պարոն, այս գողութիւնս զիշերը հանդիպած պէտք է լինի:

— Բայց կը զարմանամ թէ գողը ինչո՞ւ համար բոլոր արկդը չէ գողցած: Ինչո՞ւ համար մէջը եղած ստրկին տասներորդ կամ քսաներորդ մասը միայն գողցեր է:

— Ցիրաւի, պարոն, զարմանալի բան: Թերես գողն յուսացեր է որ չպիտի անդրադառնա: . . .

— Ըսածիդ պէս, ծերուկ, գողութիւնը դիշերն հանդիպած պիտի լինի: Բանալիս ալ յայսնի է թէ բարձիս

տակէն առած պիտի լինին: Մարգարիտայի վրայ կը կասկածիմ, բայց չեմ յուսար որ այսչափ ապերախտ գտնուի իրեն ըրած բարեացս:

— Մարգարիտան, պարոն, ոհի, այն կեղծաւորը: Սակայն ինձ ալ այնպէս կը թուի: թէ կ'երկնչի նա յլատուծոյ: Բայց յայտնի է թէ շատ աներես պէտք է լինի այն կինը՝ որպէս զի այսպիսի եղեռն մը գործազրէ:

— Չեմ կրնար ենթաղրել զլյարդարտա: Կ'ուզեմ կասկածներս այլոց վըրայ ուղղել: սակայն միայն ինքը կրնայ սենեակս մտնել և բանալիս վերցընել:

— Ո՞հ, պարոն, այսպիսի մեծ գործի մէջ պէտք չէ թեթեւութեամբ գործել, ըսաւ բոնավէնդուրա, կեղծելով սրտին մէջ եղած ատելութիւնն:

— Բան մը եկաւ միտքս, ըսաւ բաղադասար. կ'ուզեմ փորձել այս աղջիկը: Վաղը, աւելի կը տեղեկանամ. . .

Ճաշէն վերջը, վրան զլուխը շտկեց կաշւոյ վաճառականն: յեաոյ, արկեղ բանալին յայտնապէս անկողնոյն վրայ թողով, ըսաւ աղալինոյն:

— Մարգարիտա, ես այսօր յԱլոց կը պառկիմ, վաղը կը դառնամ: որդիս և իր բարեկամը Պրիւքսէլ գնացեր են: Միայն դու և երկու պահապան շոն կը մնաք տանս մէջ: Դիանց երկաթներն շնոռնաս ամէն իրիկուն գնելու:

— Հանգիստ եղիր, պարոն, պատասիանեց աղալինն, Հասանի և Միւլէի հետ քու տունդ աղէկ կը պահեմ:

## Բ

Մարգարիտա տիրոջը երթալէն անմիջապէս վերջը՝ խուցը սկսաւ կարգի դնել: բայց շատ խոռվշցաւ երբ արկեղ բանալին անկողնոյն վրայ գտաւ:

— Անշուշտ հիմա անհանգիստ պիտի լինի տէրս, ըսաւ ինքնիրեն: Եւ որպէս զի այս կարևոր բանալին չկորսուի՛ իր գոգնոցին տակ եղած գոտույն կապին ծայրը զետեղը: Բոնավէնդուրա, որ նոյն օրը շատ գործ ունէր, ոչ երբեք տուն դարձաւ, այլ ամբողջ օրը հա-

շուեգիրը ձեռքը՝ վաճառատունէ վաճառատուն կը մննէր. ինչպէս ըսինք՝ փետրուարի 24 էր: Ժամը հինգին, թէպէտ և դեռ մութ չէր, բայց Մարդարիտա զգուշութեան համար բոլոր դռները փակեց. առանց աղաղակի իր երեկոյեան ընթրիքը պատրաստեց. յետը ընթրեաց՝ երկու ժամի չափ ալ գուլպայ հիւսեց, և երբ մերձաւոր զանդակատան ժամացոյցը ինն զարկաւ, իւր երեկոյեան աղօթքներն ընելէն վերջը անկողին մուաւ, ըստ իր սովորութեան՝ վարդարանը ձեռքը բռնած:

Թէպէտ և ձմեռն էր՝ բայց սենեկին դուռը կիսաբաց թողուց, որպէս զի ըստ պարագայից իմանայ շանց հաջիւնը և կարենայ իսկոյն օգնութիւն խընդիրել՝ ի մերձաւորաց: Հասան և Միւլէյ պահապան չներն՝ մթերանոցին մէջ կը հանգէին. բայց մթերանոցին դուռը բաց էր, որպէս զի վտանդի մէջ եթէ կանչուին՝ իսկոյն օգնութեան համանին:

Մարգարիտա ժամը տասն ու մէկին խորունկ քնացեր էր, երբ շանց տարօրինակ աղաղակէն իսկոյն արթընցաւ: Զգիտելով թէ ժամը քանի է, բայց լուսին լուսէն գուշակելով թէ դեռ կէս զիշեր չէ, և շանց հաջիւնն այլ ևս շաբերդ՝ կարծեց թէ շուներն փողոցի անցաւորաց համար կը հաջեն. բայց քիչ մը վերջը՝ որոշ իմացաւ որ տան դուռը կը զարնէին:

— Անշոշտ տէրս պիտի լինի, ըստ ինքնիրեն Մարգարիտա, որ բանակին կորսընցուցած կը կարծէ:

իսկոյն վազեց Բաղդասարի սենեաւ, կը և պատուհանին մէկ բաժանմունքը բանալով՝ հարցուց թէ ով է զարնողն:

— Մենք ենք, Մարգարիտա:

Աղախինն ճանցաւ Սիմէռնի ձայնը, Բարեկամին հետ ՚ի միամին Պրիւսէնէն էն կը զառնային: Մարգարիտա վազեց փութով դռները բանալու:

— Ուրեմն ժամը քանի է, հարցուց աղախինը:

— Թէպէտ և դու քնացեր ես, ըստ Սիմէռն, բայց դեռ տասն ու մէկ է: Հայրս քնացեր է:

— Ալոց գացեր է:

— Աքանչելի բան, ըստ ցած ձայնով թէոդոր:

Մարգարիտա կանթեղ մը վառեց, և տեսաւ որ երկու երիտասարդաց դէկն՝ շատ տժգոյն էր. և հետաքըրքութեամբ հարցուց թէ ինչ բանի համար խռովեր էին:

— Ո՞հ, բան չկայ, ըստ թէոդոր: Ցուրտն ու յոգնածութիւնն զմեզ այլակերպեր են. մեր միակ դարմանը՝ հանգիստն է:

— Հիմա ձեզի ընթրիք պատրաստեմ; ըստ բարի աղախինն կրակարանը վառելով, վասն զի անշուշտ անօթի պիտի լինիք: Դարանին մէջ կարմիցուցած հաւ մը կայ կարծեմ:

— Շնորհակալ ենք, պատասխանեց Սիմէռն, միայն մեզի երկու գաւաթ գիօդի բեր:

— Ինչո՞ւ համար ըստ աղախինը, միայն այլ ըմպելիքը կ'ուղեք: — Անշուշտ տկար պիտի լինիք:

— Ո՞ս, մենք արդէն յլլոց ճաւեր ենք: Հո՞ն եթէ գիտնայինք՝ կրնայինք հօրս ալ հանգիպիլ:

Աղախինն երկու գաւաթ և շիշ մը զիօդի բերաւ: Երկու երիտասարդք ստովին դիմաց անցան, և կամաց կամաց սկսան խմել գիօդին. Մարգարիտա ալ քիչ մը խռոված իրենց տարօրինակ կերպէն, քաշուեցաւ գարձեալ իր սենեակը և անկողին մտաւ. բայց շկրցաւ քնանալ:

Սակայն երկու ժամ ետքը՝ զլուխը սկսաւ ծանրանալ, և աչքերն՝ սկսան գոցուիլ. բայց շարժում մը լսելով՝ անկողնէն ելաւ. և մտած երկու թէ անշուշտ Սիմէռն անհանգիստ պիտի լինի: առանց աղաղակի իւր փոքր սենեկին գուրս ելաւ: Երկու երիտասարդք ալ իրենց սենեկին մէջը չէին. այլ մութի մէջ ցած ձայնով արկեղ սենեկին մէջ կը խօսէին: Անհանգստութեամբ և ահիւ լեցուեցաւ խեղճ կինն. կամաց մը մօտեցաւ այն սենեկին, և վրան մարելիք եկաւ:

Երկու երիտասարդք՝ ՚ի Պրիւսէլ

բոլոր ունեցածնին խաղի մէջ կորսընցուցեցեր էին : Յետոյ՝ այս ալ բաւական չէ՝ պարտքով խաղացեր էին . բացեր էին արկղը . այն արկղը՝ որպէս բանալին Մարգարիտայի քովն էր : Բայց թէ ոդոր՝ հնարազիտութեամբ կրցեր էր նմանը շինել տալ . երկու բարեկամք կը փիճէին . վասն զի Արմէոն՝ միայն հազար ֆիօրինի քառակ մը կ'ուղէր վերցնել, ինչպէս առաջին անգամները, մինչդեռ իր ընկերը՝ կը պնդէր թէ չի բաւեր այդշափր :

— Ահա բան չունինք, ըսաւ թէոդոր, և մեր պարտքը՝ 4100 ֆիօրին է :

— Առժամն ինն հարիւր կը հատուցանենք, պատասխանեց Սիմէոն . և մնացածին համար ալ ժամանակ կը ինդրենք :

— Խաղի պարտուց համար ժամանակ . մեր պատիւը չէս մուածեր . ոհ, յիրաւի եթէ այսպէս գործես՝ ամենայն ինչ կորսուեր է :

— Բայց հայրս պիտի անդրադառնայ . մուածէ մինչև հիմա հինդ հազար ֆիօրին ալ գողցեր ենք :

— Շատ լաւ, ուրեմն գէթ հինդ հազար ֆիօրին ալ վերցնենք . Եւ կարծեմթէ հայրդ չ'անդրադառնար . վասն զի արկղին մէջ ստակ զրած ժամանակ չի հաշուեր :

— Բայց եթէ համրէ :

— Հոս չէ հիմա . մենք վաղը իրի կուն տուն կը զառնանք, երթանք գարձեալ խաղանք, և կարծեմթէ սուրբ պատմամ մէջ այս անդամ մեծ վաստակ պիտի ընեմ :

— Բայց թէ գարձեալ կորսընցընթնք

— Անկարելի է :

— Սակայն եթէ հանդիպի:

— Այն ատեն կը դրես հօրդ տեղն ի աելզ, ամէն բան կը պատմես իրեն. զիս կը թողուս, և կը յուսամ թէ կը ներէ քեզի :

— Զեմ զիմեր ինչ որոշեմ:

Այս խօսքերս կ'ըսէր Սիմէոն, երբ ներս մտաւ Մարգարիտա :

— Ոհ, պարսն Սիմէոն, աղաղակեց աղախինն երիտասարդին ոտքն ընկանք, . . . .

— Ամէն բան յայտնուեցաւ, աղակեց թէոդոր բարձրաձայն, և ձեռքը բռնած երկու քասակները գետին նետեց :

Երիտասարդն Սիմէոն Մէրքս՝ մեռլի գոյն առաւ :

— Ոհ, պարսն Սիմէոն, կրկնեց աղախինն արտասուալից, ինչ է ըրածը . միթէ հայրդ ստակ կը խնայէ քեզի: Հոգիդ կ'ուղես դատապարտել:

Ոհ, եթէ չես ուզեր ետ կենալ այս շար գործէդ, գէթ սպաննէ զիս . ոչ ոք կ'ի, մանայ, մինակ ես եմ այս տանը մէջ . կը կարծեն թէ գող մտեր է . գէթ հայրդ քու վրադ կասկածի չերթար...

Մինչդեռ աղախինն այսպէս հեծկըլ տալով կը խօսէր, և բաղուկները կը տարածէր, թէոդոր զարհուրած՝ գրասնեկին մէջ կը շրջը :

— Իրաւունք ունի աղախինն, ըսաւ թէոդոր տխուր ձայնով, և շրջազգեստին տակէն սուր մը գուրս քաշելով պէտք է սպաննել զինքը . և այս խօսքերս ըսելով՝ յարձեկեցաւ սուրը ձեռքը Մարգարիտայի վրայ, որ միայն՝

— Ով խեղճ մայրիկ, ըսաւ, և թողուց որ զարնէ :

Բայց Սիմէոն, այլայլած՝ ընդ առաջ վաղեց թէոդորի :

— Ետ կեցիր, աղաղակեց իր ընկերըն, պէտք է որ մեռնի . եթէ սպաննենք՝ հայրդ մեր վրայ չի կասկածիր . և անկէ ետքը՝ կը նանք ամբողջ արկղն ալ գողնալ, որոյ մէջ 44,000 ֆիօրին կայ :

— Զեմ ուզեր՝ որ զինքն սպաննես, աղաղակեց կատաղութեամբ Սիմէոն . զիս նախ սպաննէ եթէ Պ'ուղես :

— Որովհեսկ ամենայն ինչ յայտնուեցաւ, ըսաւ թէոդոր, ա'լ ես ծածկել պէտք չէ: Ուրեմն ա'լ այս երկու քասակներն և փափինք եթէ կ'ուղես :

Թէոդոր քսակները Սիմէոնի տալով՝ նշան ըրաւ իրեն որ սենեկէն դուրս ելլէ . բայց երիտասարդը՝ չուղես մինակ թողուլ իր ընկերը Մարգարիտայի քով: Խեղճ աղախինը՝ կու լար, կ'ողը բար . երկու ոճրագործաց կը յիշեցըներ

խոհեմութեան և պատույ սկզբունք ներն . յանուն ամենատեսին Աստուծոյ կ'աղաչէր իրենց , և կը սպառնար յաւիտենական տանջանք և պատիմ : Բայց թէոդոր առանց աղախնոյն խօսքերուն մտիկ ընելու և Սիմէոնի անդրագառանալըն՝ արկղը գատարկեր էր : Քիչ մը վերջը ստրկով ծանրաբեռնեալ բռնեց Սիմէոնի բազուկը ,

— Երթանք , ըսաւ . վախելու բան չը կայ . Մարդիտ կ'երթանք . և անկից կը գրենք հօրդ : Պէտք է որ ներէ քեզի :

— Ո՞հ , աղաղակեց Սիմէոն , Մարդարիտա զմեզ պիտի շմատնէ : Պէտք է ըսէ՝ որ գողերն եկան գիշերը : Մնաս բարով , Մարդարիտա , ցաւէ իմ վրաս :

Այս ատեն խեղճ կինը դարձեալ ջանք մ'ըրաւ : Իր երիտասարդ տիրոջ բաղկէն բռնելով :

— Մի գողանար , ըսաւ . յանուն Աստուծոյ մի գողանար քու խեղճ հօրդ դրամաց լուխն : Եթէ սխալեցար , խեղճ պատանի , եթէ դրամի պէտք ունիս խնդրէ զայն հօրէդ . յայտնէ իրեն վիշտերդ՝ զքեզ բնաւ չի մերժեր . և թէ մերժէ՝ ես իսկ կ'աղաչեմ՝ որ ընդունի զքեզ և բովանդակ իմ վարձքս ալ քեզի տայ . ես ասկից վերջը՝ առանց վարձու կը ծառայեմ ձեզի : Սիրելի որդեակ , զքեզ մօր պէս կը սիրեմ , մտիկ ըրէ ըսածիս . . . .

Մինչդեռ կը խօսէր խեղճ աղախինն , թէոդոր Սիմէոնի բազկէն բռներ և կը քաշէր զինքը , վասն զի կը փութար փախելու : Մարդարիտա ալ թէոդորի առջնը գալով :

— Դուն ես , ըսաւ , գու , որ թէ զիս ի թէ իմ երիտասարդ տէրս պիտի կորսնցընես վասն զի զնիվ ամբաստաննեմ : Եթէ զքեզ , թշուառական , անշուշտ Սիմէոն պիտի դէմկենայ : Բայց Աստուծած պիտի պատժէ զքեզ . ահա արդէն կը սպառնայ :

Այս խօսքերս ըսելով՝ ցըցաւց պատու հանէն լրացեալ լուսինը՝ որ չորս մաս բաժնուեր էր սև խաչով մը : Թէոդոր այս տեսնելով՝ զարհուրեցաւ և ետ ետ քաշուեցաւ . բայց վարկեան մը վերջը

հանգստացաւ : Այս երկոյթս՝ զոր նախ հրաշք կարծեց , Ս. Յովհաննու եկեղեցոյն զանդակատան խաչն էր : որպէս ետևէն կ'անցնէր լուսինը :

— Այս նշանը՝ զոր կ'արհամարհես արդ՝ վրէժմնդիք պիտի լինի քեզ , ըսաւ Մարգարիտա յուսահատած :

Թէոդոր հեգնական ծիծաղով՝ գարշելի երգում մ'ըրաւ և բռնութեամբ մէկդիք հրելով աղախինը՝ գետին փուեց , ուր մարեցաւ ընկաւ եղկեցին :

Օրն սկսեր էր ծաղիլ , երբ խեղճ աղախինն գտաւ զգայութիւններն : Խնքովնքը մինակ գտաւ . ահաւոր երապի մը պէս յիշեց գիշերուան հանդիպածը : Բայց տեսնելով բացուած և գտատրկ արկղը՝ բնաւ չէր տարակուսեր իր գլուխը գալիք թշուառութեանց վրայ : Սիրուը ասստիկ խոռովցաւ , և սկսաւ գարձել զառնապէս լալ :

— Կորսուեր եմ , կը ըսէր , կորսուեր : Գլուխը գարձաւ . զգաց որ պիտի համարձակի տիրով առջն երևնալու . և առանց զգալու ըրածը սկսաւ փախշիլ . մերենայի մը նման վազելով՝ հասաւ մինչև ՚ի Ցօդէկէմ : գտաւ հօնմայրը , որ զինքն այսպէս խռոված տեսնելով , և չգիտելով իրականութիւնը՝ կարծեց թէ հիւանդ է և ըսաւ որ անկողին մտնէ :

## Գ

Թէոդոր և Սիմէոն՝ լուսութեամբ անցան կանտ քաղաքին փողոցներուն մէջէն , ծանրաբեռնեալ իրենց գողցած մեծագումար դրամովք , որոց մեծ մտնուկի էր : Զանգակատան տակէն անցնելու ատեն՝ թէոդոր կարծես մղեալ աներեւոյթ զօրութենէ մը՝ յակամայա վերջին անգամ մ'ալ աչք մը տուաւ երկնաքերձ զանդակատան խաչին : Յետոյ չանալով հանել մնջէն Մարդարի այսի սպառնալիքն ,

— Ոչ եթէ ասկից կը վախեմ ես , ըսաւ Սիմէոնի , ցուցընելով երկամբեայ խաչը , այլ նոյն ատեն քիչ մը խռովեցայ , վասն զի լուսնի պարունակին վրայ

եկեր էր։ Միայն կը վախեմ, չըլլայ թէ այս բիրտ կինը մատնէ զմեզ։ Սակայն աղէկ ըրի՝ չթողուցիր որ սպաննեմ։ բայց միայն ըստծիդ պէս եթէ չմատնէ զմեզ։

— Զմեզ մատնել, կրկնեց Սիմէռն, Մարգարիտան աւելի մահ յանձն կ'առնու։

— Ո՛չչափ ալ ապահով լինինք, կը րկնեց երիտասարդ Նորմանտացին, խոհեմութեան համար պէտք է որ մէկ քանի օր հեռանանք այս երկրէն։ Եթէ լսէ հայրդ մեր ըրածն միշտ կրնաս ապաշաւել։

Սիմէռն չպատասխանեց այլ ևս. և երկու ոճրագործք լուոթեասք քաղաքէն դուրս ելան։

Քանի մը քայլ ևս ընելէն վերջը՝ տուն մը մտան, և երկու ծի վարձելով դիմեցին 'ի Գաղղիս։

Այս ահաւոր գիշերուան յաջորդ առաւոտը, մինչդեռ Սիմէռն և թէոդոր ըստ կարելուն փութով կը վախչէին, և աղախինն ալ իւր գիւղը կը փութար, Բաղտասար ալ կը մեկնէր Ալոյ քաղաքէն և կը գառնար 'ի կանս. լի տխուր և ձախող նախազգացմանք։

— Լաւագոյն էր, կարծեմ, եթէ այս փորձս չընէի։ Պէտք էր միայն արկեղս գաղտնիքը փոխել. եթէ այս կինն յանցաւոր գտնուի, զայն ալ պիտի կոր. սընցընեմ։

Քարեմիտ վաճառականն և ոչ իսկ փոքր կասկած մի ունէր իր որդւոյն վրայ։ Առաւօտը ժամը տասին՝ իր տան դիմաց հասաւ։ Զարկաւ դուռը իր սովորական ոճով, բայց ոչ որ բացաւ։ Միայն չներն ներսէն տիրով ձայնն առնելով վաղաքանաց ձայններ կը հանէին։ Դարձեալ զարկաւ Բաղտասար, բայց նորէն լուոթիւն։

— Արդեօք գողերը մտեր և սպաններ են զլարգարիտա։ Բայց Հասան և Միւլյէ ինչպէս թողուցեր են այս ոճիրը։

Երբ այսպէս տխուր կարծեաց մէջ կը թափառէր մտօք, տեսաւ որ դրացին դրուխը պատուհանէն դուրս հաներ է։

— Չտեսամը արդեօք զլարգարիտա, հարցուց Բաղտասար դրացւոյն։

— Արշալուսին, պատասխանեց դրացին, մինչդեռ դուռս կը բանայի՝ տեսայ որ կ'երթար Մարգարիտա։ Զեմ գիտեր ուր կ'երթար, բայց այսչափ գիտեմ որ խենդի պէս կը վաղէր։

Այս լուրը՝ խոռվեց Բաղտասարի սիրտը։ Միւս դրացիներն ալ եկան և ըսին թէ տեսանք որ Մարգարիտա կը վաղէր Յօդդէկէմի ճամբուն ուղղութեամբ։

— Ի՞նչ անլուր բան, ըստ վաճառականն և ոչ իսկ իմ տունս կընամ մտնել։

Բոնավիշնդուրա ալ որ բաւական առաջ քանի մ'անդամ զարկեր էր դուռը՝ վրայ հասաւ, և տեսնելով հանդիպածը՝ վախսէն դողալ սկսաւ։ Ծեր դրագիրն խօսիլ կ'ուզէր, բայց Բաղտասարը ընդհատեց խօսքն...

— Աւելորդ տեղ կասկածներու չերթանք, ըստ առաջնորդների կ'ինչ հանդիպերէ, դու ծերուկ, զնա՛ դարբինը կանչէ. վասն զի կարծեամ թէ դուռը պիտի չկարենանք բանալ։

Շատ բազմութիւն ժողովեր էր վաճառականին տան առջև։ Ա. Բաւոնի դատաւորն ալ եկաւ։

Երբ դուռը բացին՝ Բաղտասար և Բոնավիշնդուրա իսկոյն ներս վաղեցին. դրացիր և գատաւորն ալ ներս մտան։ Վաճառականը մէկէն վազեց գէպ իւր արկլը, բայց գայն բաց և զատարկ գրաւաւ։ Այլայլութենէն սկսաւ աղաղակել։

— Գողցեր են, այս բոլոր ունեցածս գողցեր են. տամնըշտու հազար ֆիօրին։ Բայց պէտք է գողը գտնել։

— Գուշակեցի որ իմ ծառայութիւնս կարեւոր է հրամանքիդ, ըստ զատաւորն։ Զոն կ'ամբաստանես։

— Կ'ամբաստանենք . . . . ըստ Բոնավիշնդուրա։ Վաճառականն քայլ մը յառաջ եկաւ և հրամայեց զրագրին որ լուէ. բայց գրագիրը մտիկ չըրաւ և զատաւորին առջև գալով կ'ամբաստանենք զլարգարիտա, ըստ։

— Զեմ հասկնար, ըստ դատաւորը, տասնուշիրս հազար ֆիօրինի գողութիւն, և այն ալ ընտանեաց աղախինէն Այս է բանալիդ, հարցուց դատաւորը, հանելով արկեղ վրայ մեացած մեծ բանալին:

— Ոչ, պատասխանեց վաճառականըն. շինծու է այս բանալին. այսչափ չէ կարծեր, ուրեմն այսչափ ատմենիսարուեր եմես: Անօրէն, բանալի ալ յարմարցուցեր է: Արդեօք միւս ճիշդ բանալին ուր է:

Սկսաւ վնտուել՝ բայց չգտաւ: Դատաւորը շորս կողմը գննելով թեղանելի կոճակ մը գտաւ.

— Այս մը պէտք է հոս եկած լինի, ըստ, կոճակը ցուցընելով:

— Ընչուշան անօրէն աղախինն գողակից մ'ալ ունեցեր է:

— Ահա աւելի բացայացտ ապացոյց մը, աղաղակեց բննավէնդուրա՝ երկու երիտասարդաց սենեակը մտնելով: Այս երկու գաւաթին և շիշն յայտնի կը ցուցնեն՝ որ երկու ոճրագործք գործ տեսնելին առաջ ոյժ և քաջալեր ստացեր են:

— Զեմ զարմանար Մարդարիտայի գողութեան վրայ՝ ըստ դրացի մը, մտածելով իր մօրը անցուցած հանգիստ կեանքն: Յայտնի է՝ գորի ընտանիքն զիւրութեամբ ակ կ'ապրի:

— Ի՞նչ կ'ըսէք, հարցուց դատաւորն, այս կինը Յօդգէկէմի ճամբուն ուղղութիւնը բռնեց:

— Այն, ստոյդ:

— Այն ատեն, պարոն Բաղտասար, մենք անմիջապէս բազմութեամբ կ'երթանք: Ի գոդգէկէմ: Յօրս մղն հեռաւրութիւն ունի. եթէ փոխստականն թեաւոր չէ՝ անշուշտ կը հասնինք. և քու տասնըսորս հազար ֆիօրինդ չի կորսուիր: Բայց այս աղախինոյն ըրած յանցանքն եռապատիկ պատժոց արժանի է:

Այս խօսքերս ըսելով մեկնեցաւ դատաւորն, թողով դիմականար խորին ալսութեան մէջ. իսկ բննավէնդուրա՝ կէս մը սրդողած կէս մը ուրախացած՝

կը մտածէր որ ասկէ վերջը իր կնո՞ց պաշտօնն որոշեալ և ստոյդ է: Խսկոյն կանչեց զինքը՝ որպէս զի խնամէ զվաճառականը. և այն օրէն սկսեալ Մարդարիտայի տեղը ինըն անցաւ:

Բաղտասարը գրեց որդւոյն իր ձախորդութիւնը, և կը կարծէր թէ դեռ ՚ի Պրիւքսէլ է. այս նամակիս մէջ կ'աղաջէր որ ես գտանայ և իր վշտացեալ հայրը միսիթարէ: Բայց թղթատարն չգտաւ զիլիմէոն ՚ի Պրիւքսէլ որ եթէ կարդար այս Հսյրական նամակը՝ անշուշտ կը զղջար: Ծնդհակառակն Անմէշն կանտ եկող վաճառականի մը ճեռքով Մոնցայէ նամակ մը կը գրէր առ իւրհօրը, որոյ մէջ կ'իմացընէր թէ երեք շաբաթի չափ Գաղղիա ճամբորդութեան պիտի ելլեմ: Այս նամակը՝ ձախորդութեան պիտի ելլեմ: Այս նամակը՝ անխորդութեան երեք օր վերջը հասաւ հօրը ճեռքը, որ և հաստատեց որդւոյն առաջարկութիւնը ըսելով:

— Խեղճ տղաս անհանդիստ կը լինի եթէ լսէ Մարդարիտայի ոնհիրը. լւագոյն է որ չիմանայ. երբ դառնայ՝ այն ատեն կ'իմացընենք:

Սակայն դատաւորն ընկերութեամբ վեց զինուրորաց՝ հասաւ ՚ի ծոդդէկէմ: Մինակ ինքն ուղղակի գնաց Մարդարիտայի տունը:

— Ո՞ւր է աղջիկդ, հարցուց պառակն:

— Ո՞հ, սկրելի պարոն, մի աղաղակը, պատասխանեց պառաւ մայրը, խեղճ աղջիկս հիւանդ է:

— Անշուշտ կը քնանայ, ըստ դատաւորն: Գէտք չէ զարմանալ, յայտնի է այնպիսի գիշեր մը անցընելին ետքը՝ պէտք է քնանայ: Կ'ուղեմ և պէտք է որ ես հետը խօսիմ:

Այս խօսքերս ըսելով Մարդարիտայի սենեակը մտաւ, ուր խեղճ աղախինն արտասուալից՝ մօրը անկողնոյն վրայ ինկեր էր:

— Մեր ետեւէն պիտի գաս, գեղեցիկ օրիորդ, ըստ դատաւորն՝ հեղնական ձայնով. սակայն նախ և առաջ ցըցուր տասնըսորս հազար ֆիօրինը:

— Տասնըսորս հազար ֆիօրին. կըր-

կնեց աղախինն զարհուրած : Ո՞՛Ն , Աս-  
տուած իմ , դիտէի ստոյգ որ զիս պիտի  
ամբատաննեն :

— Գոզերն միշտ այսպէս կը սկսին ի-  
րենց պատմութիւնն , ըստա գատաւո-  
րըն . եթէ իրենց պատճառանաց մտիկ  
ընեւ՝ աշխարհիս վրայ գող չի մնար :

— Գոյզ . . . . պարոն , աղտօնակեց  
պառաւ մայրն , ով կը համարձակի աղ-  
ջիկս գող հրատարակել :

— Ես , Ս. Բաւոնի գատաւորն , ըստ :  
Պէտք է հատուցանէ մեզի տասնշյորս  
հազար ֆիօրին . յայտնէ իր ընկերները  
և մեր ետևէն դայ :

Խեղճ պառաւն այս խօսքերս լսելով  
զլուկը գարձաւ և աթոռին վրայ ին-  
կաւ : Դատաւորը սուլց , և վեց զի-  
նուորներն ներս մտան : Մարգարիտա  
վախելով որ վրան բանութիւն չգործա-  
ծեն վար ցատքեց անկողնէն :

— Կու գամմ ձեր ետևէն , ըստ :

— Զեք կրնար տանիլ զինքը , աղա-  
զակեց ընթանալով Յօդգէէմի ժողո-  
վըրդապետը . խեղճ աղջիկը ձանը հի-  
ւանդ է , ըստա առ գատաւորն :

— Գողութիւն ըրեր է , պատասխա-  
նեց գատաւորն . գարձընէ ստակը , յայտ-  
նէ ընկերները և մէկ քանի օր հս հան .  
զիստ կը թողունք զինքը ընդ պահպա-  
նութեամբ զինուորաց :

— Երկինք վկայ կը կոչեմ , ըստա  
Մարգարիտա զողալով , որ ես չեմ գող-  
ցած :

— Այն ատեն ով է գողն . . . կը  
ճանչնան գողերն . . . . յայտնէ մեզի  
իրենց անունն :

— Զեմ կրնար :

— Այս ինչ բանալի է . հարցուց գա-  
տաւորն Մարգարիտայի գողնոցին տա-  
կէն զուրս քաշելով արկեղ քանալին :

— Ոճրագործութիւնն այս բանա-  
լիով ՚ի գործ չըրուեցաւ :

— Գիտեմ , նմանը շինել տուեր ես ,  
վասն զի երկու բանալի պէտք էր քե-  
զի : Բայց յայտնի է թէ կեանքդ կոր-  
արնցուցիր :

— Մարգարիտա , յանցաւո՞ր ես ,  
հարցուց ժողովրդապետն :

Աղախինն տիսուր կերպով քահա-  
նային երեսը նայեցաւ . յետոյ արտա-  
սուալից պատասխաննեց :

— Ո՛չ , հայր սուլրր :

— Յանցաւորաց անունը պիտի ը-  
սէս , հարցուց գատաւորն :

— Ո՛չ երբեք :

— Եւ ոչ Աստուծոյ , հարցուց քա-  
հանայն :

— Եւ ոչ Աստուծոյ . Աստուծած զի-  
տէ յանցաւորները :

— Դատաստանի մէջ , սիրելի օ-  
րիորդ , սիրելի պիտի յայտնես , ը-  
ստա գատաւորն . այնպէս տաննշանքները  
ունինք՝ որ քեզմէ աւելի կատաղիները  
կը սանձէ : Հապա երթանք :

— Որդեակ , ըստ բարի ժողովը-  
դապետն . եթէ անմեղ ես՝ Աստուծած  
անտարակիցս զքեղ ձեռքէ չի թողուր :  
Աստուծոյ օրհնութիւնը վրադ հանգչի :  
Բանանը զքեղ տեսնելու կու գամմ : Բայց  
մի թողուր որ քալէ մինչև կանտ , ըստ  
զինուորաց . թերևս զեռ չհասած կը  
մեռնի :

— Մեր փոյթը չէ , պատասխաննեց  
գատաւորն . մենք կ'ուզնէք որ յայտնէ  
ընկերները և ես դարձնէ տասնըշորս  
հազար ֆիօրինը :

Եետոյ նշան մը տուաւ . զինուորաց  
մին՝ պլանով զՄարգարիտա վերաբ-  
կուի մէջ ձիուկ վրայ դրաւ . և մեծա-  
քայլ սկսան յառաջել գէպ ՚ի կանտ .  
իսկ բարեսիրտ քահանայն տնակին մէջ  
կեցիր և վշտացեալ մայրը կը միսիթա-  
րէր :

Նոյն իրիկուն զՄարգարիտա ալ Ո .  
Բաւոն զիւղաքաղաքին բանտերուն մէջ  
փակեցին :

## Դ

Եթէ Աստուծած շինէր մեր զերագոյն  
գատաւորն՝ ով պիտի գտակէր զմեզ-  
վասն զի մարդկանց վճիռներն՝ շատ  
անդամն սխալ և անլիրաւ են :

Իսկ Ս. Բաւոնի գատաւորն մեծ գոր-  
ծունէութեամբ սկսաւ . Մարգարիտայի  
գատաստանը : Խեղճ բաղտասարը ուլու-

տին ցաւէն հիւանդացեր էր՝ սորով բնաւ շնառնուեցաւ այս գործին մէջ։ Դատաւորք ուշ դրին՝ որ Մարգարիտայի մայրը՝ թէպէտ և առանց օգնականի՝ բայց անօթութենէ չէր մեռած։ սորով փոխանակ գովելու Մարգարիտայի ծընդասիրութիւնն՝ այս բանս առին ապացոյց իրեն գողութեան։ Այնչափ կասկածի գնացին՝ որ համարելով թէ ուրիշի բարիքը կը վայելէ պառաւ մայրըն՝ քիչ մնաց զի՞նքն ալ պիտի բանտէին։

Երկու օր վերջը Յոդղէկէմի ժողովը դափակեալ բանտը այցելութեան եկաւ բայ իր խոստման։ Տեսութեան ժամանակ՝ քահանայն ալ համոզուեցաւ աղախնոյն անմեղութեան վրայ։ բայց Մարգարիտա քահանային իսկ չէր ուզեր յայտնել գողերուն անունն։ Քահանայն քաջալերեց զի՞նքը համբերութեամբ կրեյու, և յանձնեց բանտապահաց իննամբին՝ ըսելով որ ինքն չէր ոճրագործն, և թէ Աստուած քիչ ատենէն կը յայտնէ բուն յանցաւորները։ Բանտին պահապաններն՝ քահանային խօսքը յարգեցին։ բայց զատաւորներն՝ որ ամենայն խստութեամբ դատաստանը կը շարունակէին, ըստ Որատեայ բացատրութեան՝ եռապատպինձեայ սիրտ ունէին։ Որը ձեռքերնին էր, ոչ կարող էր յափշտակել։

Ամէն օր կը հարցաքննէին զՄարգարիտայի և ամէն օր ալ նոյն պատասխանը կ'առնէին։ անմեղ եմ, կը ճանչնամ յանցաւորները, բայց չեմ կընար յայտնել իրենց անունն։

Ալթ օր վերջը երբ տեսան թէ որոշ դաղափար մը չկրցան ստանալ թէ դըրամոյն և թէ յանցաւորաց նկատմամբ, որոշեցին՝ որ զՄարգարիտա տանջանաց մատնեն։ նախ և առաջ հարցաքննութիւն կոչւած տանջանաց մատնեցին։ Քահին մը չորս հատ չոր կաղնիէ փոքր գերաններ բերաւ։ Մարգարիտայի առքերը երկու գերանի մէջ սեղմեցին։ իսկոյն արիւնն ազդիւրի պէս սկսաւ ոտքերէն վազել և ոսկորներն ջախջախեցան։ Մարգարիտա ցա-

ւազին աղաղակներ հանեց՝ առանց բանմը յայտնելու և յետոյ մարեցաւ՝ տանջանքն ալ դաղրեցուցին։ Վէկըերը պատեցին և ձգեցին զի՞նքը յարդէ անկողնին վրայ։ վիրաբոյժն վճռեց որ երկեք օր վերջը նոյն տանջանքն կընայ կրկնուել։

Երբ երկրորդ անգամ տեսաւ այն ահաւոր տանջանարանն՝ նուազ ձայնով յայտնեց՝ որ ամէն բան կը խոստովանիմ։ Բայց դարձեալ չուզելով մասնելի իր երիտասարդ տէրը՝ ծնրադիր աղօթեց Աստուծոյ որ ներէ իրեն ընելիք խարեբայութեան։ բայց աղօթքի ժամանակ միափն ինկաւ խոստովանահօր ըսածն՝ թէ սուտ խօսին ոչ երբեք ներեալ է, նոյն իսկ եթէ կարենաս փըրկել բոլոր աշխարհ։ ուրեմն յանձնեց ինք զի՞նքը Աստուծոյ գթութեան և համբերութեամբ սպասեց հարցաքըննութեան։

— Յանցաւոր ես, հարցուց դատաւորն։

— Կարելի է, պատասխանեց աղախինն. վասն զի կընայի արդիկել գողութիւնը։

— Ովկ գործեց զայն։ ովկ գողցաւ տանճըրս հազար ֆիօրինը։

— Երիտասարդ անձ մը։

— կը սիրես զայն։

— Անոնցմէ մին կը սիրեմ, պատասխանեց Մարգարիտա՝ շառադունեալ։ վասն զի սեսաւ որ մերձակայը անկարգ սիրոց համար հասկըցան։

— Անոնցմէ մին, աղաղակեց բարկութեամբ դատաւորն։ ուրեմն երկուեն յանցաւորներն։

— Այս, երկու էին։

— Դու ալ մասն ունէիր։

— Ոչ, բնաւ։

— կընայիր արդիկել իրենց գողութիւնն։

— Այս, վասն զի ես ներկայ էի. և եթէ զդրացիս յօդնութիւն կոչէի կը տեսնէին որ ես անմեղ եմ։

— Շատ լաւ, աղիկս, ըստ դատաւորն գոհ արտով, հիմա նայինք անուններն յայտնէ։

- Զեմ կրնար ըսել:
- իրենց փախած աեղը դիտես:
- Զեմ դիտեր:
- Արդեօք այս գեղին մէջն են:
- Զեմ կարծեր:
- Զես ուզեր անուններն յայտնել:
- կրնար զիս մեռցնել, բայց ևս շեմ կրնար յոյտնել:
- Գարձեալ բանտ տարեց, ըստ դատաւորն:

Աղախնոյն երթալէն վերջը՝ դատաւորն ըստ իր խորհրդականաց .

— ի՞նքինքն յանցաւոր կը դատի. կարեոր կէտ մ'է այս : Խոկ իր ընկերներն երկու են . ամենայն ջանքով պիտի խուզարկեմ: Բայց այս դատաստանը զիս շատ զբազեցուց, արիշ գործեր ալ ունինք . . . . .

Ցետոյ քանի մը վայրիեան ընկդեցաւ իր մտածութեանց մէջ, և իսկոյն թղթի վրայ ստորագրեց Մարդարիտայի մահուան վիճուր:

Նոյն օրն երեկոյեան դէմ Յօդդէկէ. մի ժողովրդապետն եկաւ վերջին անգամ զինքը խոստովանցընելու, և ցաւք սրտի յայտնեց Մարդարիտայի՝ վընիուր, որ յանդրդ օրն 'ի գործ պիտի դրուէր: Մարդարիտա այս լուրը լուզվ ուրախացաւ. բարի քահանայն զինքը շատ խաղաղ վիճակի մէջ դտու, և խոստացաւ որ առտու կանուխ հաղորդէ զինքն:

Մահուան օրն 1535, մարտ 15ին որոշուած էր: Մինչդեռ անտարերութեամբ Մարդարիտայի մահուան գործին կը պատրաստեն դահիճք, դառնանք և տեսնենք թէ ինչ եղան յանցաւորք:

Մինչև Բարիկ գնացեր էին, ութ օր հոն անկարգ և ցրուած կեանք մը անցուցեր էին, և հաճոյից մէջ կ'ուզէին թաղել իրենց խոճմտանաց խայթը: Մակայն Սիմէոն սարսափելի խորհուրդներով կը տանջուէր. Երազին մէջ կը տեսնենք զՄարդարիտա դատապարտեալ բաւալ. բայց երբ կ'արթընար՝ չէր հաւատար որ կարենան այնպիսի անմեղ անձ մը դատապարտել: Օր մը երբ Դուռնէի պարաէզը շրջագայելու գնա-

ցեր էր՝ կահուեցի վան Հայկըն վաճառ աւականին հանդիպեցաւ, որ իր հօրը շատ բարեկամ էր. մարտի 8 էր :

— Դու հոս կը զրարճանաս, ըստ վաճառականն, մինչդեռ հայրդ մեծ նեղութեան մէջ է:

— Ի՞նչ վիշտ ունի, հարցուց երի աստրդը քիչ մը շառագունեալ:

— Զես դիտեր. արկը գողցեր են. և իր աղախնոյն ալ դատապարտեր են:

Սիմէոն այս խօսքերուս վրայ դողմուկսաւ: Վաճառակսուն կարծեց թէ բընական զգացմանց հետեանք է իր գիմաց այլափոխութիւնն. մխիթարեց ու քաջալերեց զինքը, և ըստ որ վայրը դարձեալ կանտ պիտի դառնամ:

Երկու երիտասարդը արդէն այն մեծ գումարին կիսէն աւելի մախեր էին: Բայց նոյն իրիկուն ալ շահէլու յուսով խաղացին և զրեթէ ունեցածնին ալ կորսւնցուցին. Սիմէոն այն ատեն ըստ որ կ'ուզեմ կանտ դառնալ, հօրս ուտքն իհնալ, ամէն բան խոստովանիլ և ազատել զՄարդարիտա. Թէոգոր ալ որոշեց որ մէկտեղ դառնայ, բայց այն պայմանաւ՝ որ բոլոր յանցանքը Սիմէոն պիտի խոստովանէր:

Երկու երիտասարդը ճամբոյ ելան, և մարտ 15ին առաւտօեան դէմ կանտ հատան: Գիւղաքաղաքին ծայրը թողուցին իրենց ծիերը՝ որպէս զի ճճանցուին. ժամի տասին հասան քաղաքին մէջ տեղը: Մարդարիտա ցորեկը պիտի սպանուէր: Թէսոգոր քիչ մը ատեն աչքերը վեր վերցուց և Ս. Յովհաննու խաչը տեսնելով.

— Ոհաւասիկ, ըստ ծիծաղելով, մեր վընէմնդիին:

Սիմէոն լուռ կեցեր և կը մտածէր թէ ինչպէս պատմէ հօրը՝ իրենց յանցանքը. արդեօք քաղաքացիք ինչ պիտի ըստ ըսեն:

Սոյն այս օրս օգը շատ գէջ էր. յան կարծեալի սաստիկ մըրիկ մ'ելաւ. Երկինք թխագոյն ամպերով ծածկուեցան. և մըրիկն այնպէս բռնութեամբ կը չնչէր՝ որ տանկիներէն ավիտի կը տորուանք վար կը թօթափէին, և նեղ-

ծերպերէն սուլիլու ժամանակ՝ ահռելի ձայներ կը հանէր. իւրաքանչիւր ոք իր շրջազդեստին մէջ կը պլուէր : Երկու բարեկամը ալ արագ արագ կը քաւէին . բայց թէուդոր.ճիշդ այս վայրկենիս քիչ մը երկիւզիւ աշքերը վեր վերցուց և սկսաւ երկաթէ խաչը դիտել, որոյ մոտածութիւնը չէր կրնար մտքէն հեռացընել:

Մինչդեռ կը մոնէին Ս. Յովհաննու փողոցը մրիգին ամենայն բոնութեամբ շնչեց, կարծես թէ երկիրը դզրդաց, և յանկարծ զանգակատան երկըթէ խաչն որ արդէն շատ մաշած էր՝ բաժնուեցաւ իր խարսիէն և երկու դողիբուն վրայ ինկաւ. թէուդոր երկու մաս բաժնուեցաւ՝ այս խօսքերս ըսելով՝ «իրաւունք ունէր ո», և մեռաւ:

Միմէն սասափիկ վիրաւորեալ էր, բայց գեռ կ'ապրէր. Նկեղեցիէն երկու քահանայ վազեցին խսկոյն: Միմէն քահանայից և բազմութեան առջև հոռ տովական այն յանցանքը, որոյ պիտի մաս երկու մաս բաժնուեցաւ և այս խօսքերս ըսելով՝ «իրաւունք ունէր ո», և մեռաւ:

տիմը Մարգարիտա պիտի կրէր: Հայն տախտակի մը վրայ զրին թէ զՍիմէնն և թէ իր ընկերոջ զիակը, և Սէն-Պատոն տարին: Սիմէնն դարձեալ խոսափանեցաւ իր յանցանքն և աւանդեց հոգին:

Թէուդորի վրայ երկու հազար ֆիօրին գտան. գողերուն մարմինը՝ դադաղի մէջ դրին, և Յօդգէկէմի ժողովրդապետըն վազեց բանտը դնաց՝ որպէս զի աղատէ զՄարգարիտա:

Երբ Բաղդասար այս ամէն հանգիւ պածն իմացաւ, մաղերը փետեց և հեռացաւ այն երկին, Մարգարիտայի տարեկան թոշակ երկու հազար ֆիօրին թողրզվ: Մարգարիտա ալ շատ շապրեցաւ և քանի մը տարի վերը վախճանեցաւ:

Կանտի այն փողոցն՝ ուռ կատարուեցաւ Մարգարիտայի մարգարէութիւնն գեռ մինչև ցայսօր Փոդոց խաչին կը կոչաւ:

## ՅԻՄԱՐՄԲՈՅՔ ՏՕԲԹԼՈՐԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

ՎԵՐ ԹԱՐԴՄԱՆԵԱԼ Ի ԳԱՂԼԱԿԱԿԱՆ

Ի Տ. Յ Ո Վ Հ Ա Ն Է Ս Վ Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Տ Հ Ե Մ Խ Ս Կ Ա Զ Ե Ա Ն

Ա.

### ՄԵՌԵԼԱԹՈՂ ԽԵՆԴԻՆ

— Թէպէտ և հակառակը կը հաստատես ինձի, Պարոն Ցօքթէօր, բայց ես շեմ կարծեր որ շատ յաջող արդինք յառաջ պիտի գայ այս զիջողութենէն — զրուցեցի, լրութեամբ մտիկը ինեւնէն վերջը իւր պատճառաբանութիւնները:

— Նոյն իսկ այս զիշեր, պատասխանեց ինքը քաղցրութեամբ մը, անոնց հետ մէկանել կերակուրի պիտի նատիս,

Կ գործնականապէս պիտի ցուցընեմ քեղի՞ որ ես բնաւ վախճալու բան մը շոնիմ անոնցմէ. անօգուտ է այս զըժքարդներուն հետ խստութեամբ վարուիլը, Հաճեիլի է ինծի տեսնալը անոնց առ խունեցած յարգանքն ու պատահանքը. ես բնաւ բան մը անոնց չեմ զլանար, և երբեք անոնց քմաց հակառակ շեմ գործեր. արձակ համարձակի իմ տանս մէջ կը շրջադային, և ոմանք ես միշտ կ'ընկերանան ինծի հետ դաշտերուն մէջ ժուռ եկած ատենս: Ես կ'ուզեմ փորձ մը փորձել՝ թէ արդեպ ազատ օդը անոնց առողջութեանը նըպատաւող կրնայ մի ըլլալ: